

ԱՆԱՀԻՏ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ

ԺԱԿ ՇԱՀԱՆ ԴԸ ԶՐՊԵՏ՝

ՓԱՐԻԶԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԴՊՐՈՑԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ

(Ամբիոնի հիմնադրման 200-ամյակի առթիվ)

Փարիզի Արևելյան լեզուների Բարձրագույն դպրոցում հայոց լեզվի ուսուցման սկզբնավորումը և նրա պաշտոնականացումը (հետևաբար և հայկական ամբիոնի ստեղծումը այդ դպրոցում) վերագրվում է պատահական մի համդիպման, որ տեղի է ունեցել 1798 թվականին Իտալիայում հայազգի Ժակ Ծաֆան դը Զրպետի (Հակոբ Զրպետյան) և Նապոլեոն Բոնապարտի միջև, ինչպես նաև այն բազում ծառայություններին, որ Զրպետը մատուցել է Նապոլեոնին: Որ հայերենը Արևելյան լեզուների դպրոցի հիմնական լեզուների շարքում իր տեղն է ունեցել, ապա դա եղել է այն պատճառով, որ այն կատարելապես համապատասխանել է նման մի դպրոցի ստեղծման ծրագրին, նաև այն պատճառով, որ հայերենը կարևոր դեր է խաղացել այդ լեզուների ուսուցման մեջ երիտասարդների ներգրավման գործում: Այստեղ պետք է նկատի ունենալ անշուշտ արևելյան ժողովուրդների հետ ֆրանսիացիների հարաբերությունները հեշտացնելու պահանջը, որից անմասն չեն եղել առևտրական մտահոգությունները, ինչպես այդ երևում է 1810 թվականին Ֆրանսիայի ներքին գործոց նախարարությանը ներկայացված մի տեղեկագրից, որի մեջ Զրպետը նշում է, թե՛ «Կայսերական գրադարանն ունի մեծ թվով հայերեն ձեռագրեր», և թե՛ «անհրաժեշտ է հասարակությանը ծանոթացնել գրական-գեղարվեստական այն հարստությունները, որ այդ ձեռագրերը պարունակում են», բայց նաև՝ «օգտակար կլիներ, որ հայերի հետ, որոնք ունեն լայնորեն տարածված վաճառականություն և որոնք արևելյան ժողովուրդների մեջ ամենից ավելի կապված են մեր կառավարությանը, հաստատվեին առավել սերտ կապեր և մոտիկից մշակվեին նրանց լեզուն ու գրականությունը: Այդ մերձեցումը հետագայում կարող էր առաջ բերել մեծ առավելություններ հատկապես մեր վաճառականության համար»: Արդարև, հայերի հետ Ֆրանսիայի հարաբերությունների առանձնակի նշանակության մասին հաճախակի է խոսվում. «Կառավարությունը անտարբեր չպետք է լինի և պետք է միջոցներ ձեռք առնի, որպեսզի ֆրանսիացի ճանապարհորդներն ու վաճառականները կարողանան ավելի ամփիջական հարաբերություններ ունենալ Արևելքի ամենահայտնի ազգերից մեկի հետ, այն երկրի, որի բնակիչները, որոնք Արևելքի ամենաձեռներեց

մարդիկն են, հպարտությամբ են հիշում, որ իրենց մախմիներին կառավարել է Լուսինյանների գերդաստանից ֆրանսիացի մի իշխան»:

Բայց եթե Ծահան դը Զրպետի հաջորդները (այն մարդու, որին պարտական ենք ֆրանսերեն լեզվով հրատարակված հայերենի առաջին քերականությունը) գնահատում են մեր մեջ արտասովոր մկարագիր ունեցող մարդուն, որը եղել է ճանապարհորդությունների մեծ սիրահար, բացառիկ ոգևորության տեր մի անձնավորություն, եթե գնահատում են մանավանդ հասարակությանը մատուցած մրա ազնիվ և անկեղծ ծառայությունները Ֆրանսիայում և Թիֆլիսում, որտեղից մա այլևս չվերադարձավ՝ թափուր թողնելով իր ստեղծած ամբիոնը, և եթե այդ ամբիոնի աշխատանքները սկզբնական շրջանում սահուն չընթացան՝ ստիպելով մրան միաժամանակ ընդհատել իր ուսուցումը ֆրանսերեն լեզվին անբավարար տիրապետելու պատճառով, այսուհանդերձ պետք է ընդունել, որ մա եղել է հայոց լեզվի ուսումնասիրության մեծ ուսմիրան Ֆրանսիայում: Նրա և մրա հաջորդների շնորհիվ է, որ հայոց լեզվի ուսուցումն այդ դպրոցում ստացավ գիտականորեն դասավանդվող առարկայի կարգավիճակ՝ ներգրավելով հիշյալ ամբիոնում ֆրանսիական մտքի ամենափայլուն ներկայացուցիչներից մի քանիսին:

Հայոց լեզվի ամբիոնի ուսանողները մրա հիմնադրման շրջանում ունեցել են տվյալ ամբիոնի դասընթացներին հետևելու տարբեր դրդապատճառներ. այդ ուսանողներից Անտուան Ժան դը Սեն-Մարտենը հետագայում դարձել է հանրածանոթ մի արևելագետ, Ասիական ընկերակցության հիմնադիրը, ուրիշներ հրապուրվել են այդ ժամանակաշրջանում հայոց լեզվի վայելած մեծ համբավից որպես «աստվածաշնչային մախմական լեզվին մոտ կանգնած մայր լեզուների մեջ հնագույնը», ոմանք դարձել են կայսերական գրադարանի կամ տպարանի պաշտոնյաներ և իրենց վերադասների կողմից ուղարկվել զանազան վայրեր որոշակի մի առաքելությամբ, ուրիշներ, որոնք դարձել են ճանապարհորդներ և վաճառականներ, և դեռ ուրիշներ, որոնք դասընթացներին հետևել են պարզ հետաքրքրությունից մղված, և վերջապես միշտ գտնվել են մի քանի իսկական ուսանողներ, որոնց առաջնորդել է սոսկ գիտության ծարավը, ինչպես, օրինակ, աբբա Բելոն կամ Լըվայան դը Ֆլորիվալը:

*

* *

Ժակ Ծահան դը Զրպետը ծնվել է 1772 թվականին Եդեսիայում և, ըստ ընտանեկան մի ավանդության, շատավիղն է եղել Ներսես Ծմորհալու եղբայր Ծահան իշխանի: Նա իր սկզբնական կրթությունը ստանում է Եդեսիայի հոգևոր առաջնորդ, հայր Պողոս Ավդայանի հետ, որի ուղեկցությամբ 1787 թվականին մի ճանապարհորդություն է կատարում դեպի Կիլիկիա, Սիրիա, Երուսաղեմ և Միջերկրականի մի քանի կղզիներ: Որոշ ժամանակ Հոռոմ, Ֆլորենցիայում և Լիվոռնոյում մնալուց

հետո, բնակություն է հաստատում Ջենովայում և սկսում ուսումնասիրել լեզուներ, իրավաբանություն, գրականություն՝ այնպիսի խանդավառ ոգևորությամբ, որ քիչ է մնում, որ կորցնի իր տենտղությունը: 1798 թ. մա Լիվոռնոյի հայկական համայնքի անունից դիմում է Նապոլեոն Բոնապարտին՝ խնդրելով նրան բարեխոսել ի նպաստ Հայ Եկեղեցու, որի առաջ ֆրանսիացիները, մտնելով Իտալիա, ինչ-որ պահանջներ էին դնում:

Նապոլեոնը, ծանոթանալով նրան, առաջարկում է, որ մա հաստատվի Ֆրանսիայում: Նույն տարվա օգոստոս ամսին, երբ Նապոլեոնը Եգիպտոսում էր գտնվում, Ծափան դը Ջրպետը բնակություն է հաստատում Փարիզում և աշխատանքի անցնում տեղի Կայսերական գրադարանում: 1798 թ. դեկտեմբերի 11-ին Փարիզի Արևելյան կենդանի լեզուների Բարձրագույն դպրոցում մտցվում է հայերենի մի դասընթաց և հայտարարվում, որ «հայազգի Ծափան դը Ջրպետը իր մայրենի լեզվի՝ հայերենի դասեր է տալու»: 1801 թ. հայոց լեզվի դասավանդումն ընդհատվում է, որովհետև Ծափան դը Ջրպետը լավ չէր տիրապետում ֆրանսերենին: Այսուհանդերձ կիսով չափ պահպանում են Ջրպետի աշխատավարձը, որպեսզի մա կազմի հայոց լեզվի մի բառարան ու մի քերականություն, և որպեսզի մա մնա «Ազգային գրադարանում դասախոսների տրամադրության տակ, եթե կարիք լինի խորհուրդ հարցնելու նրան հայերեն որևէ գործի կամ ձեռագրի մասին, քաղվածքներ կատարելու և կամ թարգմանելու հայերեն որևէ գործ կամ ձեռագիր»:

Պետք է նկատի ունենալ նաև, որ Ծափան դը Ջրպետը, որը ֆրանսիական կառավարության հայ պաշտոնյան էր համարվում, իր գործունեության ամբողջ ընթացքում կատարում էր զանազան հանձնարարություններ, որ միայն ինքը ի վիճակի էր կատարելու Ազգային գրադարանում: Նրան դիմում էին նաև հայկական տառերով տպարանի տպագրված աշխատանքների համար, դիմում էին, որպեսզի հայ վաճառականության մասին տեղեկություններ հայթայթի Ֆրանսիայի առևտրի մախարարության այն գրասենյակին, որն զբաղվում էր վիճակագրությամբ, կամ որպեսզի լինի թարգմանիչը և ուղեկցորդը պարսկական արքունիքի կողմից հատուկ առաքելությամբ Ֆրանսիա գործուղված Դավիթ Ջատուր անունով մի հայ պատվիրակի (այս վերջինի միջնորդությամբ է, որ կարդինալ Ռիշըլյոն մի հանձնարարագիր է տալիս ի նպաստ Ջրպետի, որպեսզի նրա աշխատավարձն ավելացվի):

Դիվանագիտական այն կարևոր դերը, որ կատարել է Ջրպետը, ամմասն չի եղել նրա գործունեությունից, քանի որ, ըստ Ժան-Պիեռ Մահեի (տե՛ս Ժան Տյուլար, «Նապոլեոնի Բառարանը»), դիվանագիտական շատ մուրբ մի առաքելության է պարտական մա հավանաբար իր նշանակումը Արևելյան լեզուների Բարձրագույն դպրոցում որպես դասախոս: Մելիք Միրդաուդ դը Մելիք Ծափազարյանը (սրա սերնդից մեկը դիվանագիտական կարևոր մի աշխատանք է կատարում ներկայումս), որը եղել է Արևելյան լեզուների դպրոցի ուսանող և հրատարակել է նկարագրական մի ընդարձակ աշխատություն Պարսկաստանի մասին, Ջրպետի կողմից ներկայացվում է Նապոլեոնին որպես մի մարդ, որ կարող է անվտանգ կտրել-անց-

Այն Օսմանյան կայսրության տարածքը և գնալ Պարսկաստան՝ բանակցություն վարելու Օսմի հետ ուղևորական մի դաշինք կնքելու համաձայնարությամբ: Այն դեպքում, երբ Նապոլեոնի անձնական թարգմանիչը բռնվել ու բանտարկվել էր մույն համաձայնարությամբ Պարսկաստան ուղևորվելիս, Միրդադիմ հաջողվում է անցնել սահմանագիծը և համոզել պարսիկներին՝ հարձակվելու Ռուսաստանի վրա: Զրպետի նշանակումը վերոհիշյալ պաշտոնում, որ տեղի ունեցավ 1812 թվականի փետրվարի 27-ին, հրահանգված էր Մոսկվայից՝ հավանաբար որպես վարձատրություն նրա մատուցած ծառայության դիմաց: Գալով Միրդադիմին, որը մինչ այդ դարձել էր Պարսկաստանի դեսպանը Ֆրանսիայում, նա շնորհակալության արժանացավ անձնապես Նապոլեոնի կողմից:

Զրպետի մյուս աշակերտներից երկու հոգի (Բելոն և Սեն-Մարտենը) 1812 թ. արդեն աշխատություններ էին հրատարակել, և դա մույնպես պատճառ հանդիսացավ հիշյալ պաշտոնում նրա նշանակմանը:

Հայոց լեզվի (գրաբար և աշխարհաբար) ամբիոնում, որը վերահաստատվեց Ներքին գործոց նախարարության կողմից 1810 թ. դեկտեմբերի 8-ին, դասավանդությունները տեղի էին ունենում ամիսը երեք անգամ, ժամը 18-ին: Զրպետի խոստովանությամբ՝ արձանագրված 30 աշակերտներից 5-ը կանոնավոր կերպով և քանակությամբ մասնակցում էին դասերին: 1815 թվականի դեկտեմբերի 3-ին Հովակիմ Լազարյանցին (Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադրի եղբայրը) ուղղված մի նամակում, որ հրատարակվեց 1987 թ. Ժորժ Բամպոլեմյանի կողմից «Արմաշ» ամսագրի 2-րդ համարում, Զրպետը գրում է (թարգմանությունը ժամ-Պիեռ Մահեի).

«Մեր դպրոցը, որը փակվել էր հուլիս ամսից ի վեր, պիտի վերաբացվի վաղը՝ այս ամսի 4-ին, հանդիսավոր մի արարողությամբ:... Այստեղ օտար երկրներից սովորելու են գալիս շատեր՝ անվանի, կրթված մարդիկ՝ քառասուն և ավելի տարեկան: Արդարև, մեր լեզուն մայր լեզուների մեջ ամենահին և սուրբ լեզուներից մեկն է: Գիտնականները հիացմունքով են նկատում, թե ինչքան հնություններ կան այնտեղ, այս աշխարհի հնագույն լեզվից ինչքան արմատներ և հնադարյան պատմությանն ու ժողովուրդների ծագմանը վերաբերող այլ հազվագյուտ տեղեկություններ, որոնք նա թաքցնում է իր մեջ որպես չհայտնաբերված համածոներ և չհղկված թանկարժեք քարեր»:

Այս վկայությունը արտացոլում է այն մոտեցումը, որով համեմատվում էին լեզուները, և որը հիմնված էր այդ ժամանակաշրջանում տարածված աստվածաշնչական այն գաղափարի վրա, ըստ որի մայր լեզուները ծագել են մարդկության հնագույն մի լեզվից: Հայերենը համարվում էր այդ մայր լեզուներից ամենահինը, և այդպիսի համեմատության հետևորդները, մայր լեզուների մեջ հայերենի գրաված դիրքից տարված, գալիս էին Արևելյան լեզուների բարձրագույն դպրոց՝ հետևելու հայերենի դասավանդություններին:

1826 թ. հունիսի 23-ին Ծափան դը Զրպետը Ներսես արքեպիսկոպոսի կողմից հրավիրվում է Թիֆլիս՝ այնտեղ եվրոպական լեզուների մասնավոր մի դպրոց կազմակերպելու առաջադրանքով: Այդ կապակցությամբ նա երեք տարվա ժամկետով արձակուրդ է խնդրում Ֆրանսիայի Ներքին գործոց նախարարությունից: Գալով Թիֆլիս՝ նախ դասավանդում է տեղի Ներսիսյան դպրոցում՝ ձգտելով, որ այն դառնա Փարիզի Արևելյան լեզուների գուգակիցը Արևելքում: Թիֆլիսում Զրպետը դառնում է տեղի հայության համրային կյանքի կարևոր դերակատարներից մեկը. նա գործում մասնակցություն է ունենում հատկապես Պոլոժենիայի խմբագրման գործում, սահմանադրություն, որը 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը միակցվեց Ռուսաստանին, հիմք հանդիսացավ Ռուսական կայսրության սահմաններում ապրող հայության ազգային- եկեղեցական կյանքի կառավարման համար:

Արևելյան լեզուների դպրոցում Լըվայան դը Ֆլորիվալը փոխարինում է Ծափան դը Զրպետին նրա բացակայության ժամանակ: Բայց երբ Զրպետը չի վերադառնում Թիֆլիսից, նրան համարում են պաշտոնից հրաժարված, և Ֆլորիվալը դառնում է ամբիոնի ղեկավար:

Ծափան դը Զրպետից պահպանվել են հրատարակված բազմաթիվ գործեր.

1812 թ. նա լույս է ընծայում «Պատմություն Մատթեոս Եղեսիացու» երկհատոր աշխատությունը՝ ծանոթագրված և մկարագրող: Սա խաչակիրների առաջին արշավանքին վերաբերող մի հատված է, որը գտնվում է Փարիզի Ազգային գրադարանում: Այս աշխատությունը հետագայում ամբողջացվեց Դյուլորիեի կողմից:

1824 թ. հրատարակում է Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը» («Հիշատակարաններ Փարիզի Լեզվաբանական ընկերակցության», 1830 թ.), հունարենով, լատիներենով և հայերենով՝ Կայսերական գրադարանի համար 124 և 127 ձեռագրերի հիման վրա:

1820 թ. լույս է ընծայում Ներսես Ծնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմը:

1823 թ. հրատարակվում է նրա «Հայոց լեզվի քերականություն» աշխատությունը: Սա ուսումնական մի ձեռնարկ է, որ Զրպետը պատրաստել էր իր աշակերտների համար: Այս քերականության մեջ կան բազմաթիվ կետեր, որոնք գիտականորեն վիճելի են, ինչպես, օրինակ, այն կետը, ըստ որի «հունարենը առանձին մի լեզու է, որը չի խառնվել ուրիշ որևէ լեզվի հետ» և կամ՝ «հնում հայերենն ունեցել է 6 բարբառներ, հետո , 14-րդ դարում՝ 30»:

Իր ամբողջության մեջ այս ձեռնարկը տարտամ, անորոշ մի աշխատություն է՝ հաճախ կասկածելի, անհամոզիչ ստուգաբանություններով և այնպիսի տեսակետներով, որոնք հետագայում հերքվեցին: Հովհաննես Զոհրաբյանը «Ասիական հանդես»-ում (հունվար-հունիս 1823, հուլիս-դեկտեմբեր 1823, էջ 169 և 253) խստորեն քննադատեց հիշյալ աշխատությունը: Նրա քննադատությանը պատասխանելու Զրպետի փորձերը մույժիկ չարժանացան հրատարակության, այնքան որ հիմնավորված էին Զոհրաբյանի քննադատությունները: Այնուամենայնիվ մեծ եղավ Ծափան դը Զրպետի դերը Ֆրանսիայում որպես հայագիտությունը սկզբնավորողի:

Նրան ենթ պարտական ֆրանսերեն լեզվով շարադրված արդի հայերենի (աշխարհաբար) առաջին քերականության համար: Բացի այդ, նա պատրաստեց այնպիսի փայլուն ուսանողներ, ինչպիսիք էին Անտուան Ժան դը Սեն-Մարտենը՝ «Ասիական ընկերակցության» հիմնադիրներից մեկը, ինչպես նաև Լըվայան դը Ֆլորիվալը, որը փոխարինեց իրեն: Զրպետի թողած հիշատակն ավելին է, քան պարզ մի գիտնականի հիշատակը. նա հիշվում է որպես սովորականից բարձր մի անձնավորություն, որպես մեծ ճանապարհորդ, հասարակական ակնաավոր գործիչ, որին մեծ չափով պարտական են Արևելյան լեզուների դպրոցում հայերենի դասընթացի ստեղծումն ու տնականացումը:

Նա նաև կմնա այդ դպրոցում հայոց լեզվի ամբիոնի հայկական ծագում ունեցող և հայախոս միակ ղեկավարը անցնող երկու հարյուր տարվա ընթացքում:

Աղբյուրներ. 1. ԻՆԱԼԿՈՒ-ի (Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտ) արխիվային ֆոնդ. 2. «Հայկական հանրագիտարան», Երևան, 1983. 3. Ժան -Պիեռ Մահե, «Ժամանակը Զրպետի մեկ ճամպարը՝ ուղղված Հովակիմ Լազարյանին». 4. «Համապատկեր հայ ժողովրդի պատմության», Փարիզ, 1803 (ֆրանս.):

Ֆրանսերենից թարգմանեց՝

ՊԱՐԳԵՎ ԾԱՀԱՆԶՅԱՆԸ